ՕՐՀՆԵՑԱԼ Է ԾՆՈՒՆԴ ԵՒ ՑԱՑՏՆՈՒԹԻՒՆ

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՐԵԹՂԵՀԷՄԻ ԱՅՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՆԿԻԿԸ*

Լեռների լանջում—քարայրի խորքում
Ծողում է կըրակ երկնային սիրոյ
Կայծերով վառուած մի նորոգ կեանքի,
Ծողում է կըրակ—այնտեղ յաւիտեան
Լոյսը չի հանգչում,
Ցոյսը չի խաբում:

*
* *

Ներս մտիր այրը—հովիւ ու գառներ,
Գառների մըսուր—անշուք խանձարուր,
Ահա Մանկիկը անմեղ ու անբիծ
Ժպտում է պայծառ—սէր է մեզ շնչում.
Ահա լալիս է—այդ նըրա սիրտն է,
Որ կեանքի շեմքից ծաղիկ օրերից
Մարդկանց վշտերի համար ճմլում,
Մարդկանց մեղքերին ներումն աղերսում:

*
* *

Անկեղծ զղջումով, մաքուր արցունքով
Խոնարհուիր, ընկեր, համբուրիր նըրան,—
Նա քեզ կը ներէ, նա քեզ յոյս կը տայ.
Եւ դու զօրացած կըրիր քո խաչը,—
Էլ շըղթայ չըկայ,
Էլ արիւն չըկայ:

(«Արաքս» հանդէս, Պետերբուրգ, 1893)